

ՀԱՊՀ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

01.09.2020 - 30.11.2020 ԹԹ.-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունն իր բնականոն գործունեությունն է իրականացրել ՀՀ օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:

Մասնավորապես.

1. 17.09.2020թ.-ին տեղի ունեցավ արհեստակցական կազմակերպության տարեկան համաժողովը, որի ժամանակ քննարկվեցին և հաստատվեցին Կազմակերպության 2019թ.-ի կանոնադրական և ֆինանսական գործունեության ստուգումների վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը, Կազմակերպության 2019թ.-ի տարեկան գործունեության մասին հաշվետվությունը, 2019թ.-ի տարեկան բյուջեի կատարողականը, սեփականության օգտագործման 2019թ.-ի տարեկան հաշվետվությունը, 2020թ.-ի տարեկան բյուջեի նախահաշվի նախագիծը: Համաժողովում հաստատվեցին Կազմակերպության ծրագրերին 2020թ.-ին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները, հաստատվեցին Կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը և Կազմակերպության ծրագրերի նոր խմբագրությամբ կանոնակարգը:
2. 17.09.2020թ.-ի համաժողովում Արհեստակցական կազմակերպության նախագահ վերընտրվեց Գայանե Գալստյանը, հաստատվեցին արհկոմիտեի և Վերահսկիչ հանձնաժողովի նոր կազմերը:
3. Համաժողովի կողմից Արհեստակցական կազմակերպության բյուջեի հաստատումից հետո.
 - ա) 24.01.2020թ. թիվ 01/20 նիստում ընդունված որոշումների համաձայն Բանակի օրվա կապակցությամբ «Ուրախություն և տոն» ծրագրով դրամական նվերներ են տրվել արհեստակցական կազմակերպության տղամարդ անդամներին:
 - բ) 10.03.2020թ. թիվ 06/20 նիստում ընդունված որոշումների համաձայն Արհեստակցական կազմակերպության «Սոցիալական օգնություն» ծրագրով Կազմակերպության մեկ անդամի տրվել է դրամական օգնություն և «Ուշադրություն» ծրագրով Կազմակերպության մեկ անդամի տրվել է դրամական նվեր:
 - գ) հաշվի առնելով, որ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ արհեստակցական կազմակերպության կին անդամներին նվերների տրամադման ուշացումը պայմանավորված էր ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ, արհկոմիտեի 17.09.2020թ.-ի որոշմամբ Կազմակերպության կին անդամներին տրվեցին դրամական նվերները:
4. Արհեստակցական կազմակերպության «**Մշակույթ, սպորտ և հանգիստ**» ծրագրով, գումար է հատկացվել Կազմակերպության 11 անդամների համար, սույն թվականի

սեպտեմբերի 19-ին Շաքիի ջրվեժ էքսկուրսիա կազմակերպելու նպատակով:

5. Արհեստակցական կազմակերպության «**Ռիթմիկություն և տոն**» ծրագրով, ծննդյան հորեղանական տարեդարձի կապակցությամբ, կազմակերպության և երեք անդամի տրվել են դրամական նվերներ:
6. Արհեստակցական կազմակերպության «**Սոցիալական օգնություն**» ծրագրով կազմակերպության և մեկ անդամի տրվել է դրամական օգնություն:
7. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է 3 նիստ: